ԻՐԵՎԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Ազատութեան ու անկախութեան կանչը մեր բազմադարեան պատմութեան հրամայականն է, մեր ազգի գիտակցութեան թելադրանքն է, մեր ապագայ գոյատեւման երաշխիքն է»:

Վազգէն Ա. Կաթողիկոս

1988-ին պատմական սխալն ուղղված տեսնելու հավատքով եւ արդարությունը վերահաստատելու անբեկանելի վճռականությամբ՝ հայ ժողովուրդը ոտքի կանգնեց՝ Արցախը Մայր Հայրենիքին վերամիավորելու պահանջով: 1988–1994 թթ. ընթացող արցախյան գոյամարտն ի վերջո ծնկի բերեց թշնամուն: Անցած երեսուն տարիներին Հայոց աշխարհն ապրում էր նոր շնչով ու նոր տեսիլքով: Հոգեւոր ու բարոյական վերածնության տեսիլքը հույս էր ներշնչում գալիք օրերի նկատմամբ: Հայաստանում եւ Արցախում վստահ եւ հստակ օրենսդրական քայլերով գանահարվում էին անցյալի պատմական սխալները, օրվա իշխանությունները խոստումներ էին տալիս վերացնելու հասարակության մեջ տեղ գտած անարդարությունն ու անհավասարությունը, ասել է թե՝ հասարակությունը բռնել էր ինքնամաքրման ճանապարհը՝ տքնելով արդարության հիմքի վրա ստեղծել իրավական պետություն:

Երկրում օրենքի գերակայության հաստատման ու հոգեւոր-բարոյական կյանքը խթանելուն զուգահեռ՝ քայլ առ քայլ ամրապնդվում եւ զորանում էր նաեւ հայոց պետականության միակ երաշխավորը՝ հայոց բանակը: Վերջինս միակ երաշխավորն էր նաեւ 30 տարի ծխացող արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Թուրք-ադրբեջանական դաշինքը, իր բանակում ընդգրկելով նաեւ ահաբեկիչների եւ վարձկանների, Արցախում սանձազերծեց նոր պատերազմ: Ու կրկին՝ արդեն որերորդ անգամ փոթորկվեց Արցախը: Փոթորկվեց ողջ հայությունն ի Հայրենիս եւ ի սփյուռս:

Այս անգամ եւս դարերով իր ժողովրդին զորավիգ եղած, պետականության բացակայության շրջանում հայ ժողովրդի ճակատագրին տեր կանգնած Հայ Եկեղեցին կրկին հաղորդակցվեց իր ազգի արդար պահանջատիրությանը։

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր երանաշնորհ նախորդների նման հանդես եկավ բազմաթիվ կոչ-ուղերձներով՝ ուղղված հայությանը, բացի այդ՝ տասնյակ նամակներով խնդիրը բարձրաձայնվեց միջազգային ատյաններում, պետական, կրոնական, մշակութային ու հասարակական-քաղաքական հեղինակավոր գործիչների շրջանակներում։ Դիվանագիտական ճանապարհով հարցի խաղաղ լուծմանն ուղղված ջանքերից զատ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն իր եկեղեցականաց դասով (ճեմարանական, սարկավագ, քահանա, վարդապետ, եպիսկոպոս) ձեռնամուխ եղավ մարդասիրական օգնություն կազմակերպելուն։ Բացի նշվածից՝ եկեղեցականները բառացիորեն հրետակոծության տակ շարունակում էին իրականացնել իրենց հոգեւոր առաքելությունը, իսկ նրանցից շատերն առաջնագծում ոգեւորում եւ ոգեշնչում էին մարտնչող զինվորներին։

Նոյեմբերի 9-ին եռակողմ համաձայնագրի ստորագրմամբ ավարտվեց Արցախյան երկրորդ պատերազմը։ Ավարտվեց ծանր պարտությամբ, պարտվեցինք բոլորս, գուցե պարտվել էինք դեռ պատերազմը չսկսված։ Այս մասին մենք չենք իմանա, կիմանան հաջորդ սերունդները, երբ պատմությունը՝ որպես արդար դատավոր, կայացնի իր վճիռը։ Կորցրեցինք բոլորս, բայց ավելիով՝ հայ եկեղեցականը, որը կորցրեց ոչ միայն իր պատմական հայրենիքի՝ արյունով ու քրտինքով հետ բերվածի մի մասը, այլեւ հոգեւոր հայրենիքի մի մասը, որը նույնիսկ հայրենիքը հետ բերելուց հետո, հնարավոր է, կորսված լինի հավետ։ Օրինակները շատ են։ Բայց եղան եւ հաղթողներ, ո՛չ, ամենեւին էլ նկատի չունենք թշնամուն. այս պատերազմում չպարտվեց, ավելին՝ հաղթեց հայ զորականը, որի մարտի դաշտում գործած հերոսական դրվագներն այսօր եւս արժանի են «գրոյ յիշատակի»։

Եկեղեցին արձանագրեց, որ եռակողմ համաձայնագրի ստորագրման արդյունքում «կայացված որոշումները փոթորկել են ամենքիս հոգին» (Գարեգին Բ.)։ Եւ ահա այս փոթորկոտ ոգով եւ աղետահար հոգով պետք է թերթենք Արցախի պատմության հերթական էջը, որը, հուսանք, չի վերածվելու հայոց պատմության վերջին էջի։ Այս ծանր պարտությունից

հետո որքան հոգեկան ուժ ու եռանդ, բազկի թափ ու մկանների պրկում է անհրաժեշտ լինելու հայ ժողովրդին՝ ծնկի չգալու համար։ Արդյոք կունենանք բավական ներուժ՝ ճակատներս բաց ու բարձր աշխարհին նայելու, վերահաստատելու ազգերի մեջ հնագույններից մեկը լինելու, պետականություն եւ մշակույթ ունենալու, գոյության եւ լինելության իրավունքը։

Պատմականորեն փաստված աներկբա իրողություն է, որ հայ ժողովուրդը տոկացել է բնական աղետների եւ թշնամու հարվածների ներքո, սակայն մշտապես հառնել է նույնիսկ Եղեռնի մոխիրներից, Սարդարապատում հաստատել իր լինելության իրավունքը՝ մշտապես աջակից եւ ոգեպնդող ունենալով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, որն այսուհետ եւս ի գլուխ ունենալով Գարեգին Բ. 70-ամյա իմաստուն Հայրապետին, զորավիգ կկանգնի իր ժողովրդին տագնապի պահին, կամոքի հայ ժողովրդի վիշտը եւ հույս ու հավատ կներշնչի գալիք պայծառ օրերի նկատմամբ։

Ա. ԲՀՆ. Պ.